ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM
SHARE

Համարը	N 1344-Ն	Տեսակը	Հիմնական
Տիպը	Որոշում	Կարգավիճակը	Գործում է
Սկզբնաղբյուրը	Միասնական կայք 08.10.20-08.23.20 Պաշտոնական հրապարակման օրը 14.08.2020	Ընդունման վայրը	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	Ընդունման ամսաթիվը	13.08.2020
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	Ստորագրման ամսաթիվը	14.08.2020
Վավերացնող մարմինը		Վավերացման ամսաթիվը	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	15.08.2020	Ուժը կորցնելու ամսաթիվը	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ «ՀՀ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 օգոստոսի 2020 թվականի N 1344-Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 1919-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ, ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՏԱԿԱՐԱՐՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԴԻՄԱՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1919-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ ու լրացումներ՝ համաձայն N 1, 2, 3, 4, 5 և 6 հավելվածների:

2. Թույլատրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը՝

1) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և «Երվադա» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի մայիսի 24-ին կնքված N ԳՀԱՊՁԲ-7/9-1 պայմանագրում կատարել փոփոխություն՝ դրանով նախատեսված ապրանքների մատակարարման ժամկետը սահմանելով մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և «Նոր Ֆուդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2016 թվականի մարտի 9-ին կնքված ՇՀԱՊՁԲ-7/8-2 պայմանագրի շրջանակում առաջացած 2 308 950 դրամ կրեդիտորական պարտքերի մարման գործընթացն իրականացնել 2020 թվականի ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի «ՀՀ պաշտպանության ապահովում» ծրագրի «Ռազմական կարիքների բավարարում» միջոցառման «Կենցաղային և հանրային սննդի նյութեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածով:

3. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ կետի 1-ի ենթակետով նախատեսված պայմանագրի կողմերի նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները՝ պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարման վերջնաժամկետից մինչև 2019 թվականի դեկտեմբերի 25-ը ընկած ժամանակահատվածի համար:

4. Հույժ գաղտնի:

5. Հույժ գաղտնի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ

Ն. Փաշինյան

2020 թ. օգոստոսի 14
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 13-ի N 1344-Ն որոշման

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 13-ի N 1344-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 13-ի N 1344-Ն որոշման

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 13-ի N 1344-Ն որոշման

Հավելված N 5
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 13-ի N 1344-Ն որոշման

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2020 թվականի
օգոստոսի 13-ի N 1344-Ն որոշման

Պաշտոնական հրապարակման օրը՝ 14 օգոստոսի 2020 թվական: